ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021 թվականի ____ -ի N -Ն

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 105-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Ղեկավարվելով Նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի Արտակարգ իրավիճակներում քաղաքացիական ավիացիայի օդանավակայանների գործելու և Հայաստանի Հանրապետության պետական մարմինների հետ փոխհամագործակցության կարգը սահմանելու մասին» N 105-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

- Որոշման ամբողջ տեքստում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության» և «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության» բառերը փոխարինել համապատասխանաբար «Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի» և «Արտակարգ իրավիճակների նախարարության» բառերով.
- Որոշման և հավելվածի ամբողջ տեքստում «պետական մարմիններ» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել համապատասխանաբար «պետական կառավարման համակարգի մարմիններ» բառերով և դրանց հոլովաձևերով.
- Որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

3. Սույն որոշման 1-ին կետով սահմանված կարգում ընդգրկված պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում մշակել կամ լրամշակել սույն որոշման 1-ին կետով սահմանված կարգից բխող իրենց գերատեսչության պլանը և համաձայնեցնել Արտակարգ իրավիճակների նախարարության ու Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի հետ:.

- Որոշման հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1) կարգում ընդգրկված մարմիններն են՝

ա. ՀՀ տարածքում գործող քաղաքացիական ավիացիայի օդանավակայանները,

բ. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն – լիազոր մարմին,

գ. Արտակարգ իրավիճակների նախարարությունը - ԱԻՆ,

դ. Առողջապահության նախարարությունը - ԱՆ,

ե. Պաշտպանության նախարարությունը - ՊՆ,

զ. Արտաքին գործերի նախարարությունը - ԱԳՆ,

է. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը – ԲՏԱՆ,

ը. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը – ՏԿԵՆ,

թ. Էկոնոմիկայի նախարարությունը – ԷՆ,

ժ.Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը – ԿԳՄՍՆ,

ժա. Ազգային անվտանգության ծառայությունը - ԱԱԾ,

ժբ. Ոստիկանությունը,

ժգ. Պետական եկամուտների կոմիտեն – ՊԵԿ,

ժդ. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը - ՍԱՏՄ,

ժե. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը – ԱԱՏՄ.

- Որոշման հավելվածի ամբողջ տեքստում՝

ա. «քաղավիացիա» բառը և դրա հոլովաձևերը փոխարինել համապատասխանաբար «լիազոր մարմին» բառերով և դրանց հոլովաձևերով,

բ. ՀՀ ԳՆ-ի սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն

բառերը և «ՀՀ ԳՆ» հապավումը ու դրանց հոլովաձևերը փոխարինել համապատասխանաբար «ՍԱՏՄ» հապավումով և դրանց հոլովաձևերով,

գ. «ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն» բառերը և «ՀՀ ՏԿՏՏՆ» հապավումը ու դրանց հոլովաձևերը փոխարինել համապատասխանաբար «ԲՏԱՆ» հապավումով և դրանց հոլովաձևերով,

դ. «ՀՀ ՖՆ» հապավումը և դրանց հոլովաձևերը հանել,

ե. «ՏԿԶՆ» հապավումը և դրա հոլովաձևերը փոխարինել համապատասխանաբար «ՏԿԵՆ» հապավումով և դրա հոլովաձևերով,

զ. «ՀՀ ԿԱ ԱԱԾ» հապավումը և դրա հոլովաձևերը փոխարինել համապատասխանաբար «ԱԱԾ» հապավումով և դրա հոլովաձևերով,

է. «ոստիկանություն» բառը և դրա հոլովաձևերը փոխարինել համապատասխանաբար «Ոստիկանություն» բառով և դրա հոլովաձևով,

ը. «ՀՀ ՊԵԿ» հապավումը և դրա հոլովաձևերը փոխարինել համապատասխանաբար «ՊԵԿ» հապավումով և դրա հոլովաձևերով.

- Որոշման հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետի «ժդ.» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ժդ. աղետ - համայնքի կամ հասարակության բնականոն կենսագործունեությունը խաթարող այն արտակարգ իրավիճակն է, որի վերացումը գերազանցում է սեփական ուժերով հաղթահարելու կարողությունը:».

- Որոշման հավելվածի 20-րդ կետում «օդանավակայանի անվտանգության անձնակազմի» բառերը փոխարինել «օդանավակայանում ծառայություն իրականացնող ոստիկանների» բառերով.
- Որոշման հավելվածի 59-րդ կետում «ՀՀ ՊՆ-ի» հապավումից հետո լրացնել «, ԱԱՏՄ-ի» հապավումը.
- Որոշման հավելվածի 86-րդ կետում «ՀՀ ԱՆ-ն» հապավումը փոխարինել «ԱԱՏՄ-ն» հապավումով.
- Որոշման հավելվածի 89-րդ կետում «ՀՀ ԱՆ-ի» հապավումը փոխարինել «ԱԱՏՄ-ի» հապավումով.
- Որոշման հավելվածի 94-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«94. Ազգային աջակցման մարմնում ներառվում են լիազոր մարմինը, ԱԻՆ-ը, ՊՆ-ն, ԱՆ-ն, ՏԿԵՆ-ը, ԱԳՆ-ն, ԲՏԱՆ-ն, ԿԳՄՍՆ-ն, ՊԵԿ-ը, ՍԱՏՄ-ն, ԱԱՏՄ-ն, ԷՆ-ը, Ոստիկանությունը, ԱԱԾ-ն:».

- Որոշման հավելվածի 103-րդ կետի «ոստիկանության» հապավումից հետո լրացնել «, ԱԱՏՄ-ի, ԱԳՆ-ի» հապավումը.
- Որոշման հավելվածի 117-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«117. հհ տարածքում խոշոր աղետի դեպքում ՀՀ տարածքում գործող

քաղաքացիական ավիացիայի օդանավակայանների հետ հի պետական կառավարման համակարգի մարմինների փոխհամագործակցության ուղղություններն են՝

- Լիազոր մարմին՝

ա. ՀՀ քաղաքացիական ավիացիայի օդանավակայանների թռիչքային և ավիացիոն անվտանգության, տեխնիկական կարգավորման իրականացում.

բ. աջակցություն օդանավակայանի կենսագործունեության ապահովմանը.

- ԱԻՆ՝

ա. օդանավակայանում ծագած ԱԻ դեպքում փրկարարական և հրդեհաշիջման աշխատանքների իրականացում.

բ. ժամանող միջազգային օգնության գործընթացների ընդհանուր համակարգում.

- ԱՆ՝

ա. տուժած և տարահանված անձնակազմի ու քաղաքացիների բուժսպասարկում.

բ. հիվանդանոցների և շտապ օգնության ծառայության հետ փոխհամագործակցության ապահովում.

գ. կենսաբանական անվտանգության միջոցառումների ապահովում.

դ. օդանավակայանում սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում.

- ԱԳՆ՝ իր լիազորությունների սահմաններում ժամանող միջազգային օգնության, փրկարարական ստորաբաժանումների՝ ՀՀ սահմանահատման միջոցառումների կազմակերպում, մասնակցություն միջազգային ուժերի և իշխանությունների միջև փոխհամա-գործակցության կազմակերպմանը, անհրաժեշտության դեպքում, ՀՀ կառավարության հանձնարարությամբ, աջակցություն միջազգային փրկարարական ստորաբաժանումներին, մարդասիրական օգնություն բերած խմբերին թարգմանիչներով ապահովման գործընթացի կազմակերպմանը և միջազգային հանրության իրազեկմանը.
- ԲՏԱՆ՝ աջակցություն ժամանած միջազգային ստորաբաժանումներին կապով ապահովման գործընթացի կազմակերպմանը.
- ԷՆ՝

ա. ժամանող միջազգային օգնության ՀՀ սահմանահատման գործընթացների պարզեցված կարգով կազմակերպման և իրականացման աշխատանքներին աջակցություն՝ երկակի դասին պատկանող ապրանքների ելքի արտոնություն տրամադրելու ուղղությամբ.

բ. ՀՀ պետական սահմանի հատման կետերում ժամանած միջազգային ստորաբաժանումներին փոխհատուցման սկզբունքով անհրաժեշտության դեպքում ջրով ու սննդով ապահովում.

- ՊՆ՝

ա. օդանավակայանի կայուն գործունեությանն աջակցություն.

բ. ժամանող միջազգային օգնության ՀՀ սահմանահատման գործընթացների պարզեցված կարգով կազմակերպման և իրականացման աշխատանքներին աջակցություն՝ ռազմական դասի հնարավոր պատկանող բեռների մուտքի ապահովման ուղղությամբ.

- ՏԿԵՆ՝ ժամանած միջազգային օգնության տեղափոխման համար տրասնպորտային միջոցների, ինչպես նաև փոխհատուցման սկզբունքով՝ վառելիքի ապահովում.
- ԿԳՄՍՆ՝ ազգային աջակցման մարմնի աշխատանքներին աջակցելու, ինչպես նաև ժամանած միջազգային ստորաբաժանումներին թարգմանիչներով (ոչ մասնագիտացված) ապահովելու նպատակով համապատասխան ուսանողների հավաքագրում.
- ԱԱԾ՝ օդանավակայանի գործունեությանն աջակցություն.
- ԱԱՏՄ՝

ա. ներմուծվող դեղորայքի և բժշկական սարքավորումների նկատմամբ պետական վերահսկողության իրականացում.

բ. սանիտարակարանտինային հսկողությունը օդանավակայան ժամանող չվերթների նկատմամբ, անհրաժեշտության դեպքում նաև իրականացնում է առողջապահական միջոցառումներ՝ բժշկական, կանխարգելիչ, սահմանափակող (համաձայնությամբ).

գ. կազմակերպում է օդանավակայանում հակահամաճարակային միջոցառումներ.

- ՍԱՏՄ՝ իր լիազորությունների սահմաններում ժամանող փրկարարական ստորաբաժանումների սննդի, որպես մարդասիրական օգնություն բերվող սննդամթերքի և փրկարարական շների ՀՀ պետական սահմանի հատման գործընթացների կարգավորում.
- Ոստիկանություն՝

ա. հասարակական անվտանգության և ՀՀ մուտքի արտոնագրերի ձևակերպման իրականացում, դեպի օդանավակայան մուտքի և ելքի երթուղիներում հսկիչ անցագրային կետի հիմնում.

բ. սպասասրահի ուղևորների, ճանապարհող/դիմավորող քաղաքացիների տարահանման իրականացում.

գ. ժամանած միջազգային ստորաբաժանումներին տեղակայման բազա ուղեկցում և անվտանգության ապահովում.

դ. օդանավակայանի կայուն գործունեությանն աջակցություն.

- ՊԵԿ՝ ժամանող միջազգային օգնության ՀՀ սահմանահատման գործընթացների պարզեցված կարգով կազմակերպում և իրականացում։։

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։